ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N25/10

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության
խորհրդի նիստի

ք. Երևան 22 դեկտեմբերի 2025թ.

Մասնակիցների ցուցակ՝

1. Անդրանիկ Ալեքսանյան
2. Աննա Կարախանյան
3. Արամ Վերդյան
4. Իգոր Մկրտումյան
5. Կատարինե Գևորգյան
6. Քրիստինա Հակոբյան
7. Քրիստինե Գյոնջյան
8. Նարինե Դերձակյան
9. Միսակ Խաչատրյան
10. Վեսմիրա Հարությունյան

Նիստը նախագահում էր Իգոր Մկրտումյանը: Նիստի քարտուղար ընտրվեց Վեսմիրա Հարությունյանը: Որից հետո հաստատվեց օրակարգը:

Օրակարգ՝

1. **«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվին համաձայնություն տալու մասին**
2. **«Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տարեկան ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին**

1. **«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվին համաձայնություն տալու մասին**

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ խորհրդի փոխնախագահ Քրիստինա Հակոբյանը՝ նշելով, որ համաձայն «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի կանոնադրության՝ կազմակերպության խորհուրդը համաձայնություն է տալիս «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի տարեկան ծախսերի նախահաշվին: Այնուհետ, ներկայացվեց կազմակերպության 2026 թվականի ծախսերի նախահաշվի

նախագիծը: Նախագծի ներկայացումից հետո խորհրդի մի շարք անդամների կողմից տրվեցին հարցեր, որոնց տրվեցին պարզաբանումներ:

Քննարկման արդյունքում կազմակերպության խորհուրդը ձայների 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ հարաբերակցությամբ որոշեց համաձայնություն տալ կազմակերպության 2026 թվականի ծախսերի նախահաշվին:

Որոշում՝ ***1. Համաձայնություն տալ «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության 2026 թվականի ծախսերի նախահաշվին:***

2. «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տարեկան ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին

Հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ խորհրդի փոխնախագահ Քրիստինա Հակոբյանը՝ ներկայացնելով ընկերության 2026 թվականի ծախսերի նախահաշվի նախագիծը: Նախագծի վերաբերյալ հնչեցին հարցեր, որոնց տրվեցին պարզաբանումներ:

Նախագիծը դրվեց քվեարկության: «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության խորհուրդը, որպես «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի մասնակիցների ընդհանուր ժողովի լիազորություններն իրականացնող, ընդունեց այն ձայների 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ հարաբերակցությամբ:

Որոշում՝ ***1. Հաստատել «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի ծախսերի նախահաշիվը:***

Նիստի նախագահող՝ **Իգոր Մկրտումյան**

Նիստի քարտուղար՝ **Վեսմիրա Հարությունյան**